

ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ (1915 Թ.)

Միհրան Մինասեան

Հետագայ էջերով հրատարակութեան կու տանք Հայոց ցեղասպանութեան սկզբնական օրերուն Հալէպէն Գահիրէ յղուած գաղտնի տեղեկագիր մը, որ հետաքրքրական է մէկէ աւելի պատճառներով եւ լոյս կը սփռէ կարգ մը անծանօթ փաստերու վրայ:

Տեղեկագրին կարեւոր բացայայտումներէն մէկը այն տեղեկութիւնն է, որ ճակատագրական այդ օրերուն, երբ հայութեան խլեակները հազարներով կը մահանային անօթութենէն, եւ ամենուրեք խիստ կարիք կար նիւթական օժանդակութեան, հալէպահայեր «պետական արգելք»-ով զրկուած էին իրենց ազգային եւ անհատական ստացուածքները վաճառելու իրաւունքէն: Այդ վաճառքն ու անկէ գոյացած նիւթական եկամուտը կրնար մեծապէս նպաստել աքսորականներու կեանքի փրկութեան: Օսմանեան իշխանութիւններու որդեգրած այդ արգելքը, որքան որ ծանօթ է մեզի, բացի այս փաստաթուղթէն՝ այլ տեղ չէ արձանագրուած:

Նորութիւն են նաեւ երկրէն ելլելով՝ Հալէպ հասնող աքսորական հայերու թուային համեմատութեան մասին տրուած տուեալները: Կան նաեւ հետաքրքրական այլ բացայայտումներ:

Տեղեկագրին մէջ յիշուած որոշ մանրամասնութիւններ կրկնուած են Գերմանիոյ Հալէպի հիւպատոսին կողմէ յղուած պաշտօնական տեղեկագրի մը կցուած 23 Օգոստոս 1915 թուակիր տեղեկագրի մը մէջ, որ հիւպատոսին յանձնուած է անանուն հայու մը կողմէ: Մենք տեղին, ծանօթագրութեամբ մատնանշած ենք այդ նմանութիւնները:

Ջոյգ տեղեկագրերն ալ բացայայտօրէն պատրաստուած են նոյն անձնաւորութեան կողմէ, որ հաւանաբար Հալէպի Ազգային Առաջնորդարանի պատասխանատուներէն կամ քահանայ հայրերէն մէկն է, թերեւս առաջնորդական փոխանորդ Յարութիւն Քինյ. Եսայեանը կամ ուրիշ մը, եւ ապահովական նկատառումներով երկուքին պարագային ալ անոր անունը պահուած է գաղտնի: Հրատարակուող տեղեկագրին հեղինակը խնդրած է, որ ան «ամենայն զգուշութեամբ գաղտնի պահուի», որպէսզի հեռու մնան անոր «սոսկալի» հետեւանքէն:

Տեղեկագիրը Գահիրէ դրկուած է ռուսահպատակ հայ գաղթականի մը միջոցով, ինչպէս որ նշուած է անոր առաջին էջին վերեւ գտնուած մակագրութեան մէջ՝ «Պատճէն՝ ռուսահպատակ հայ գաղթականներու միջոցաւ Հալէպէն ստացուած պաշտօնական նամակին»:

Հրատարակուող տոյն տեղեկագրի ձեռագիր բնագիրը կը պահուի Հ. Բ. Ը. Միութեան Գահիրէի արխիւներուն մէջ: Հաւանաբար, Գահիրէի Ազգային Առաջնորդարանը, իրեն յղուած այս տեղեկագիրը ընթերցանելով դրկած է գայն Բարեգործականի կեդրոնին, որպէսզի անոնք եւս իրազեկ ըլլան կացութեան եւ ըստ այնմ օգնութեան փութան աղէտեալներուն:

Տեղեկագիրը հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց ոեւէ միջամտութեան: Պահած ենք նոյնիսկ անոր լեզուական անհարթութիւնները, որոնք անկասկած արդիւնք են փութկոտութեան:

Մեր կողմէ անոր կցած ենք միայն անհրաժեշտ ծանօթագրութիւններ:

* * *

Հալէպ, 1915 Օգոստոս 3/16

Գերապատիւ Առաջն. փոխանորդ հայր հայոց Եգիպտոսի եւ մեծ. տեսարք անդամք Քաղաքական Ժողովոյ Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի

Գողունի կերպով եւ ամենամեծ աճապարանօք առիթէ մ'օգտուելով է որ այս ճգնաժամային վայրկեանին մեր հոգեվարքի ձայնը Ձեզի հասցունելու պատեհութիւնը կ'ունենանք, վայրկեան մ'որ հայերուս կեանքը կը հնձէ, կ'ոչնչանանք, թերեւս հայուն վերջին ձայնն է որ պիտի լսէք, մենք այլեւս չենք սոսկար, մահը շատ մօտէն կը տեսնենք, մահը ոչ թէ անհատին այլ ազգին՝ որոս հատակոտոր բեկորներն են որ կեանք կ'աղաղակեն իրենց եղբայրակիցներուն ու մարդկութեան: Յետագայ տողերը մեր ցաւերն ամբողջովին չեն կրնար ներկայացնել, ստուգութեան երկար քննութեան կը կարօտի.

1.- Այժմ Հալէպի մէջ հայկական 6 նահանգներէն եկող 6000 այրի կիներ ու տղաք կան, ասոնց մէջ 11 տարեկանէն վեր մանչ տղայ չըկան, նոյնպէս Համայի¹

¹ Պատմական նշանաւոր քաղաք՝ օսմանեան Սուրիա նահանգի Համա գաւառի կեդրոնը: Այժմ՝ Սուրիական Արաբական Հանրապետութեան համանուն նահանգի կեդրոնը: Կառուցուած է Որոնդէ գետի երկու ափերուն վրայ: Քաղաքը յայտնի է իր եզակի հսկայ ջրանիւներով, որոնցմէ հնագոյնը կը պատկանի 14-րդ դարուն: Հարուստ է պատմական յիշատակարաններով՝ մզկիթներով, եկեղեցիներով, պալատներով, բաղնիքներով, իջեւանատներով եւ այլն:

Առաջին Աշխարհամարտի նախօրեակին Համան ունեցած է 60-70 հազար բնակիչ: Հայոց ցեղասպանութեան տարիներուն դարձած է հայ քաղաքականներու համախմբման կարևոր կեդրոն, ուր Յուլիս 1915-էն սկսեալ ապաստանած են բազմահազար հայեր, առաւելաբար՝ Քեսապի եւ Անտիոքի կողմերէն եւ մասաւանդ՝ Այնթապէն: Անոնց թիւը շրջան մը հասած է մինչև 20 հազարի, որոնց աւելի քան եօթը հազարը մահացած է այնտեղ, հակառակ անոր որ Համա քաղաքուած հայերը այլ վայրերու հետ համեմատած՝ գտնուած են աւելի տանելի պայմաններու մէջ եւ ուղղակիօրէն չեն ենթարկուած կոտորածներու: Անոնց մահուան գլխաւոր պատճառները եղած են սովն ու համաճարակը: Ըստ Թալէաթ Փաշայի 17 Հոկտեմբեր 1915 թուակիր ծածկագիր հեռագրին՝ Համայի մէջ կային մօտաւորապէս 20 հազար [հայ] քաղաքականներ, որոնցմէ զանազան հիւանդութիւններու հետևանքով օրական կը մահանար 70-80 հոգի (*Osmanli belgelerinde ermenilerin sevk ve iskani (1878-1920)*, Անգարա, 2007, էջ 288):

1918-1919 թուականներուն հոն գործած է 165 որբեր պատսպարող հայկական որբանոց մը եւ 59 ապաստանեալներով կիներու ապաստանարան մը: 1923-ին Համայի հայոց թիւը հասած է 400-ի:

շրջականները 3000 եւ Բէսէլայն² 1000 եւ Տէր Զօն³ 3000, որով ընդամենը 13000 այրի

² Գիւղ՝ օսմանեան Տէր Զօր անկախ գաւառի Ռաս Իւլ Այն գաւառակի կեդրոնը, Հասիճէ քաղաքէն՝ հիւսիս-արևմուտք, 84 քլմ. հեռավորութեան վրայ: Կ'ենթադրուի որ կառուցուած է միտանիներու մայրաքաղաք Վաշուկկանի աներակներուն վրայ: Այժմ կը գտնուի Սուրիական Արաբական Հանրապետութեան մէջ: 1877-ին Ռաս Իւլ Այնի եւ Հասիճէի միջև ինկած տարածութեան վրայ բնակեցուած են մօտ 5 հազար չէչէն ընտանիքներ, որոնց մեծ մասը Առաջին Աշխարհամարտի ավարտին զոհ գացած է համաճարակի: Անոնցմէ ողջ մնացած է ընդամենը 300 ընտանիք: 20-րդ դարասկզբին եղած է հազիւ 50 տնտուր փոքրիկ գիւղ մը, սակայն անելի ետք, անոր մօտէն անցնող Կ. Պոլիս-Պաղտատ շոգեկառքի երկաթուղագիծին պատճառով, ասանք ստացած է յատուկ նշանակութիւն եւ դարձած գաւառակի կեդրոն:

1914-ին Ռաս Իւլ Այնը ունեցած է 2.667 չէչէններէ եւ թուրքերէ բաղկացած բնակիչներ (Թաներ Աբչամ, *Երիտթուրքերի Գործած Ոճիրը Մարդկության Դեմ. Հայոց Տեղասպանությունը Եւ Էթնիկ Զտնադրանքը Օսմանեան Կայսրությունում*, թարգմանեց՝ Յասմիկ Յարութիւնեան, Երեւան, 2015, էջ 333), ունեցած է նաեւ 10 տունի չափ հայ արհեստավորներ, որոնք կոտորուած են տարագրութեան հրամանին արձակուած առաջին օրն իսկ (*Արիամարտ*, Կ. Պոլիս, Նոր Շրջան, թիւ 13 (1828), 7 Դեկտեմբեր 1918, էջ 1): Տեղասպանութեան տարիներուն գիւղը եղած է աքսորական հայերու համակեդրոնացման գլխաւոր կայքերէն մէկը, ուր հաւաքուած էին կայսրութեան հայաբնակ շրջաններէն աքսորուած բազմահազար հայեր, որոնց վրանները տեղակայուած էին գիւղէն քիչ մը անդին՝ բլուրի մը վրայ: Հալէպէն սուրիական անապատ աքսորուած հայերուն մօտ մէկ երրորդը դրկուած է Ռաս Իւլ Այն:

Ռաս Իւլ Այնի առաջին մեծ ջարդը կազմակերպած է Վանի նախկին կուսակալ Ճեւտէդ պէյը, որ Փետրուար 1916-ին Ատանայէն Ռաս Իւլ Այն հասնելով հրահանգած է կոտորել տեղւոյն 50 հազար հայերը: Կոտորածը սկսած է 17 Մարտ 1916-ին (Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւն, *Հայկական Հայրց հանրագիտարան*, Երեւան, 1996, էջ 384):

Ըստ Ներքին Գործոց Նախարարութեան Աշիրէթներու եւ գաղթականներու տեղադրման եւ վերաբնակեցման տնօրէնութեան Հալէպի ընդհանուր տեսուչի փոխանորդ Ապտիւլ Ահատ Նուրիի 7 Մարտ 1916 թուակիր հեռագրին՝ մինչև այդ թուականը Ռաս Իւլ Այնի մէջ «այլևայլ պատճառներէ» մահացած են 35 հազար աքսորական հայեր, իսկ ըստ Արամ Անտոնեանի՝ հոն տեղի ունեցած կոտորածներուն զոհուած են մօտաւորապէս 70 հազար հայեր (Անտոնեան Արամ, *Մեծ Ոճիրը. Հայկական Վերջին Կոտորածները Եւ Թալէադ Փաշա*, Պոսթըն, 1921, էջ 18, 169), մինչ ցուրտի, անօթութեան ու համաճարակներու հետևանքով օրական հոն մահացած է 5-600 հայ, իսկ 4 ամսուայ ընթացքին՝ 13-14 հազար հայ:

Տեղասպանութենէն ետք Ռաս Իւլ Այն հաստատուած է փոքրաթիւ հայութիւն մը: Ի յիշատակ նահատակաց, 1980-ին եւ 2008-ին այնտեղ կառուցուած է յուշակոթող մը եւ կանգնեցուած՝ խաչքար մը:

³ Քաղաք՝ Եփրատի հովիտին մէջ, գետափին, օսմանեան համանուն անկախ գաւառի կեդրոնը, իսկ այժմ՝ Սուրիական Արաբական Հանրապետութեան համանուն նահանգի կեդրոնը: Առաջին Աշխարհամարտի նախօրեակին քաղաքի բնակչութեան թիւը, ըստ այլևայլ աղբիւրներու, տարւոքերած է 9-15 հազարի միջև, մեծ մասամբ՝ արաբներ: 20-րդ դարասկզբին գաւառը ունեցած է 450 հայ բնակիչներ, որոնք մեծ մասամբ հաստատուած էին համանուն քաղաքին մէջ: Տեղւոյն հայ կաթոլիկ համայնքը 1885-ին ունեցած է իր եկեղեցին: 1903-ին հոն գտնուած են անելի քան 50-60 առաքելական հայեր:

Տեղասպանութեան տարիներուն Տէր Զօրն ու անոր մօտակայ անապատը դարձած են Արևմտեան Հայաստանէն, Կիլիկիայէն եւ կայսրութեան հայաբնակ այլ շրջաններէն աքսորուած բազմահազար հայերու համակեդրոնացման գլխաւոր կայքերը: Անելի ետք աքսորեալները 21 Օգոստոս 1916-ին դրկուած են մօտակայ Սուվարի ու Շէտտատէի շրջանները, ուր եւ կոտորուած են Օգոստոսի 25-ին, գաւառի կառավարիչ՝ Սալէի Զէքիի անմիջական մասնակցութեամբ: Ըստ Արամ Անտոնեանի՝ Տէր Զօրի ջարդերուն զոհուած են մօտաւորապէս 200 հազար հայեր (Անտոնեան, *նշ. աշխ.*, էջ 18), իսկ ըստ վերապրող Յովհաննէս Մերճանեանի՝ Սալէի Զէքի Տէր Զօրի եւ շրջակայ աւաններուն մէջ սպաննած է 120-150 հազար հայ: Անոնք «Տէր Զօրի մէջ հայ աղջիկներ ու մանուկներ մերկացուցած եւ հրացանաձգութեան փորձեր կատարած են անոնց վրայ՝ իբրև թիրախ գործածելով զանոնք, ընդհանրապէս կրակով այրած են, ողջ ողջ թաղած են, անօթի ու ծարաւ ձգելով

ու տղաք կան: Ասոնք 3-5 ամիսէ իվեր ճամբայ ելած են իրենց հայրենիքներէն, ճանապարհին մի քանի անգամներ կողոպտուելով անօթի, մերկ, ծարաւ ու բռնակ ճամբորդած են, միայն մէկ անգամ ոմանց ալ երկու անգամ մէկ մէկ կտոր հաց տրուած է կառավարութեան կողմանէ: Այնպէս կը հաւաստուի որ այս 6 վիլայէթներէն⁴ գալիք այրիներու թիւը 60000ի պիտի հասնի, այնչափ տկարացած ու հիւանդ են որ ոտքի վրայ կայնելու կարողութիւն չունին: Մեծաւ մասամբ ոտքերնին վիրաւորուած է բռնակ քայլելէն⁵:

Հալէպի մէջ գտնուած այրիներուն քննութենէն հասկըցուած է որ մօտաւորապէս իրենց հայրենիքէն մեկնողներու 1000էն հազիւ 400ը Հալէպ հասած է. մնացեալ 600էն 380 անձ, 11 տարեկանէն վեր այր եւ 85 կին իրենց ընկերացող ժանտարմաներու եւ ջորեպաններու ձեռքով գիւղերէն ու քաղաքներէն հեռու դաշտերու մէջ սպաննուած են եւ մեծ մասամբ ջուրը նետուած են: 120 երիտասարդ հարս ու աղջիկ առեւանգուած ու փախցուած են նմանապէս 40 ալ մանուկներ, այնպէս որ, ինչպէս ըսինք, ասոնց մէջ գեղադէմ երիտասարդ մանչ ու աղջիկ չկան:

Եկողներէն 100էն 60 համեմատութեամբ հիւանդ ու ոտքերնին վիրաւոր են, ասոնք մօտերս պիտի դրկուին Համա եւ Մուսուլ⁶ ուր իրենց ստոյգ մահ մը կ'ս-

սպաննած են մասնաւորապէս մանուկներն ու աղջիկները, վարձկան արարներու և ժանտարմաներու միջոցաւ ստիւնքները կտրած, լկեղ տուած ու կտոր կտոր ջարդած են»: Զինադադարին Մերձանէան հոն գտած է 1500 վերապրող հայուհիներ և 30 այրեր միայն, մեծ մասամբ կիլիկեցիներ, բոլորն ալ հոգեպէս և բարոյապէս «վիատած, յուսահատ, անասնացած» էակներ (Հայաստանի ազգային արխիւ, ֆոնտ 1388, ցուցակ 1, գործ 72, թերթ 5ա): Երբ Յունուար 1919-ին անգլիացիներ քաղաք մտած են, Տէր Զօրի մէջ գտած են ընդամենը 980 հայ (Աքչամ, *նշ. աշխ.*, էջ 339):

Տեղասպանութենէն ետք, Տէր Զօր մնացած են փոքրաթիւ հայեր: 1931-ին կառուցուած Սր. Հռիփսիմէ եկեղեցիին տեղ 1991-ին կառուցուած է Նահատակաց Յուշահամալիրը և Սր. Նահատակաց փառատը Եկեղեցին:

⁴ Օսմանեան վարչական միաւոր, նահանգ, կուսակալութիւն:

⁵ Տեղեկագրի այս պարբերութեան մէջ յիշուած Հալէպի, Համայի, Ռաս Իւլ Այնի և Տէր Զօրի աքսորականներուն թիւը, ինչպէս նաև Հալէպ սպաստող աքսորականներու թիւը՝ նոյնութեամբ կրկնուած են Գերմանիոյ Հալէպի հիւպատոս Ռոսսլերի կողմէ քանցելի Պէթման Հովվէգիին յղուած տեղեկագրի մը կցուած՝ 23 Օգոստոս 1915 թուակիր յաւելումին մէջ, որ բնութագրուած է որպէս «մի հայի գեկուցագիրը». միակ տարբերութիւնն այն է, որ այնտեղ յիշուած է, որ աքսորականները ճամբայ ելած են 2-5 ամիս առաջ, ի տարբերութիւն այստեղ յիշատակուող 3-5 ամիսներուն (Վոլֆ-գանգ Գուստ (Հր.), *Հայերի Ցեղասպանութիւնը 1915-1916. Գերմանիայի Արտարքին Գործերի Նահարարութեան Քաղաքական Արխիւի Փաստաթղթերից*, գերմաներէնէ թարգմանեց՝ Ռուզան Բորիսի Յորդանեան, Երևան, 2008, էջ 334-335):

⁶ Պատմական վաճառաշահ մեծ քաղաք՝ օսմանեան Մուսուլ նահանգի կեդրոնը: Այժմ՝ Իրաքի Արաբական Հանրապետութեան համանուն նահանգի կեդրոնը: Կառուցուած է Տիգրիս գետի աջ ափին: Գետի հանդիպակաց ափին կը գտնուին պատմական Նիսուլ քաղաքի ավերակները: Միջնադարուն քաղաքը ունեցած է փոքրաթիւ հայ գաղութ մը, որուն մասին հնագոյն յիշատակութիւնները կու գան 14-րդ դարակէսէն: 1857-ին հոն կառուցուած է Սր. Էջմիածին հայկական եկեղեցին: 1915-ին Մուսուլ գտնուած են մօտաւորապէս 200 հայեր, մեծամասնութեամբ՝ գաղթած Սղերդէն:

Տեղասպանութեան տարիներուն Մուսուլ եղած է հայ աքսորականներու համակեդրոնացման կարեւոր վայր մը, ուր հաւաքուած են մօտ 30 հազար հայեր, որոնցմէ պատերազմի աւարտին մնացած են մօտաւորապէս 4 հազար հայ եւ անլի քան հազար որբեր: Շրջան մը վերջ, անոնց մեծամասնութիւնը հեռացած է քաղաքէն:

պատ: Աննկարագրելի ու անօրինակ է այն խժոժություններն որոնց ենթարկուած են ճանապարհին: 3-5 ամիսէ ի վեր ճամբայ կը քալեն, 2-3-5-7 անգամ կողոպտուած ու մինչեւ անգամ վարտիքներուն մէջը նայուած են: Ոչ միայն անօթի թողուած, այլեւ ջուր գտած ատենսին ջուր խմելու անգամ միջոց տուած չեն: Չափահաս ու գեղեցիկ հարս ու աղջիկներու 3/4ը փախցուելէն զատ, մնացեալներէն քիչ շատ առողջ ու երիտասարդ եղողներն ալ ժանտարմաներուն⁷, ջորեպաններուն ու այլոց հաճոյքին ծառայեցուցուած են գիշերները: Քստմնելի այս տեսակ դէպքերու երեսէն մեռնող հարիւրաւորներէն ողջ մնացողները կը պատմեն բաներ զորս մարդկային ականջը կը մերժէ լսել:

Հալէպի ու Ատանայի վիլայէթներու եւ Մարաշի սանճագին⁸ մէջ արեւելեան նահանգներուն մէջ եղածին նման ջարդ չէ պատահած, սակայն ասոնց ենթարկուած նեղություններն ու Հաւրանի⁹, Քերէկի¹⁰ եւ Մուսուլի անապատներու մէջ բնակեցունելու մտադրութիւնը նկատի առնուելու որ ըլլայ դիւրաւ կը հասկըցուի որ ասոնք ալ ստոյգ եւ բռնագրոսիկ կերպով բնական մահուան մը դատապարտուած են: Երբ այս ժողովուրդն որ գրեթէ եւրոպական կեանք ու կենցաղ մ'ունի, դիւրակեցութեան վարժ է, իրեն բոլորովին օտար ու եթէ կարելի է ըսել բարբարոս կլիմայի մը ներքեւ բնակելու ստիպուի, հարկաւ պիտի մեռնի եթէ մինչեւ ցայն վայր աւելի բարբարոս դանակն ու գնդակն իրենց մահը չի փութացնեն:

Քինադադարին տեղոյն որբանոց-այրիանոցին մէջ ապաստան գտած են 5-600 անոքներ, իսկ 1928-ին Մուսուլի մէջ կային հազիւ 200 հայ ընտանիքներ՝ 155 երկսեռ աշակերտներ ունեցող ազգային վարժարանով մը (*Եփրատ*, Հալէպ, Բ. տարի, թիւ 126, 29 Սեպտեմբեր 1928):

⁷ Ֆրանսերէն՝ քաղաքապահ զինուորական, ներքին ապահովութեան պաշտօնէայ, քաղաքային ոստիկան:

⁸ Թրքերէն՝ գաւառ: 1915-ին Մարաշը անկախ գաւառ էր, կապուած ուղղակի Կ. Պոլսոյ: Նախապէս մտած էր Հալէպ նահանգի կազմին մէջ:

⁹ Կամ Հորան: Աշխարհագրական ընդարձակ տարածք օսմանեան Սուրիա նահանգին մէջ: Կ'ընդգրկէր այժմու Սուրիոյ հարաւ-արեւմտեան շրջանն ու Յորդանանի հիւսիսային մասը, այսինքն՝ Դամասկոսի հարաւէն մինչև Յորդանանի հիւսիսակողմը ինկած տարածութիւնը: Ընդարձակ դաշտավայր մը, որուն համար ալ կոչուած է Հորանի կամ Հաւրանի դաշտավայր: Նշանաւոր քաղաքներն են՝ Սուրիոյ Տար'աւ և Յորդանանի Իրպէտ քաղաքները:

Յեղասպանութեան տարիներուն Հաւրան եղած է բազմահազար հայ քաղաքականներու հաւաքավայր: Ըստ երեք տարի այնտեղ ապրած Վահրամ Տատրեանի՝ 1915-ի վերջերուն իրենց բնակած շրջանին մէջ գտնուած են 20 հազար քաղաքական հայեր, իսկ մօտակա Ճերէշ քաղաքին մէջ՝ մօտ 600 ընտանիքներ: Վերջիններու մօտ կէսը բնակած է տուններու մէջ, իսկ մնացեալները՝ քարանձաւներու: Այդ 20 հազար քաղաքականներէն 1918-ի Նոյեմբերին ողջ մնացած էին հազիւ 450 հիւանդ, հիւծած ու կմախացած մարդկային խլեակներ: Մահացութեան պատճառը եղած են «կառավարութեան հալածանքները- զինուորագրութիւն, քաղաք, բանտարկութիւն- տեղացի ժողովուրդին ատելութիւնը-սպանութիւն, առեւանգում, հարստահարութիւն- եւ բնութեան արհաւիրքները- տով, զրկանք, հիւանդութիւն» (Վահրամ Տատրեան, *Դէպի Անապար (Փրցուած Էջեր Օրագրէս)*, Նիւ Եորք, 1945, էջ 146-147, 407):

¹⁰ Պատմական քաղաք՝ օսմանեան Սուրիա նահանգի Քերէկ գաւառի կեդրոնը, Ամման քաղաքէն հարաւ, մօտ 120 քմ. հեռաւորութեան վրայ, Մեռեալ ծովէն ոչ շատ հեռու: Այժմ մաս կը կազմէ Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան: Պահպանուած է քաղաքի պատմական հսկայ բերդը: Վաղ միջնադարուն անոր բնակիչներուն մէկ մասը եղած են քրիստոնէաներ: Շրջան մը խաչակիրներ իշխած են անոր: 1516-ին զայն գրաւած են օսմանցիները: 1910-ին Քերէկի բնակիչները ըմբոստացած են օսմանեան կառավարութեան դէմ:

Արդ, եղբայրներ, վերն ըսի արդէն, երկարօրէն կրկնելու ատեն չ'ունինք, շատ համառօտ կերպով կ'ամփոփենք. Հայաստանի մէջ մէկ հայ իսկ մնացած չէ ըսել կարելի է, Կիլիկիոյ մէջ ալ չի մնալու վրայ է, հայն իր կեանքէն, ինչքէն ու պատիւնէն իր զրաւում, իր վերջին բեկորներուն ձայնն է որ ձեզի հասցնելով օգնութիւն կ'աղաղակէ, օգնութիւն մնացեալներու կեանքը փրկելու համար, դրամ՝ անոնց հաց ճարելու համար: Հոս բարեացականութիւն ցուցնող գերման հիւպատոսի¹¹ միջոցաւ գաղտնի կերպով գերման դեսպանին¹² տեղեկութիւն տրուած է ու դիմումները կը շարունակուին, հոս տարածայնութիւն մը կայ որ կառավարութիւնը պիտի արտօնէ կիներն ու 17 տարեկանէն վար եղող մասն ալ տղաքը դուրս պիտի դրկուին, ի՞նչ միջոցներով, ո՞ր, ո՞ր շոգենաւով, ծախքը որո՞ւ կողմանէ տրուելով յայտնի չէ¹³. մենք վայրկեան առ վայրկեան կ'սպասենք որ օգնութիւն մըլլայ մեզի, ուշացնելը մահն է ազգին, փութացէք ի՞նչ միջոցաւ որ կրնաք, Ատանայի, Մարաշի եւ Այնթապի հայերը կ'իստով հոս հասան, արդէն Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդին կէսը գաղթեցուցուած են Արաբիա, մնացեալներն ալ գաղթել կը տրուին, դրամ հասցուցէք, հաղորդակցութեան ամէն միջոցէ գրկուած ենք:

Գրամ, դրամ, դրամ դրրկեցէք ամերիկեան կառավարութեան միջոցաւ¹⁴: Գրաբերը ամէն վարձատրութեան արժանի է, պէտք եղած մանրամասնութիւնները պիտի տայ:

¹¹ Նկատի ունի Գերմանիոյ Հալէպի հիւպատոս Վալդեր Ռոսսպլերը:

¹² Նկատի ունի Գերմանիոյ Կ. Պոլսոյ դեսպան Հանս Վանգենհայմը (1859-1915): Ան 1912-1915 եղած է Օսմանեան Կայսրութեան մօտ Գերմանիոյ դեսպան: Մեծ ջանք թափած է Օսմանեան Կայսրութիւնը Ռուսաստանի դէմ պատերազմի ներգրաւելու գործին մէջ: Դէմ եղած է Արևմտեան Հայաստանի բարենորոգումներու ծրագրին և արդարացուցած է թրքական իշխանութիւններու արևմտահայոց դէմ կիրառած տեղահանութիւնն ու բռնութիւնները, թէ և իր տեղեկագիրներուն մէջ նշած է, որ այդ միջոցառումներուն նպատակը՝ հայ ազգը բնաջնջելն է (*Հայկական Հարց* հանրագիտարան, էջ 427):

¹³ Հալէպի մէջ շրջան ընող այս տարածայնութեան մասին Գերմանիոյ Հալէպի հիւպատոս Ռոսսպլեր քանցելը Պէթման Հովվէգին յղած 3 Սեպտեմբեր 1915 թուականի տեղեկագրին մէջ նշած է թէ կառավարութիւնը օրեր առաջ յայտարարութիւն մը տարածած է, ըստ որուն՝ այն հայերը որոնք կը փափաքին արտագաղթել Թուրքիայէն, կրնան դիմել այդ քայլին՝ պայմանաւ որ վերադառնան պատերազմի աւարտէն ետք միայն: Բանաւոր նշուած է նաև, որ հեռանալ ցանկացող իւրաքանչիւր հայ պէտք է ունենայ այդ մասին ճշմարիտ փաշայի արտօնագիրը: Հիւպատոսը անելցուցած է նաև, որ փոխադրութեան համար նաւեր չեն գտնուած, իսկ հայերը համոզուած էին որ «կառավարութեան յայտարարութիւնը լուրջ չէ», և բոլոր անոնք որոնք պիտի փորձեն թոյլտուութիւն ստանալ՝ պիտի հետապնդուին: Աւարտին Ռոսսպլեր յիշած է, որ հակառակ անոր որ «գործնական» հնարաւորութեան պարագային բոլոր հայերը պիտի փափաքէին արտագաղթել, օրէնքի հրապարակումէն երեք շաբաթ անց, բացի իր կողմէ երաշխատրուած մէկ ընտանիքէ, ոչ ոք համարձակած է գաղթելու դիմում ներկայացնել իշխանութիւններուն: Այս օրէնքին յաջորդած է այլ օրէնք մը, որ արգիլած է 4-րդ բանակի իշխանութեան շրջանէն ունէ մէկուն հեռանալը առանց էնվեր փաշայի արտօնութեան:

Ռոսսպլեր այս մասին իր խօսքը աւարտած է եզրակացնելով, որ «արտօնագիրը փաստօրէն անվաւեր է և տրուած միայն ձևի համար» (Գոսստ, *նշ. աշխ.*, էջ 330-331):

¹⁴ Ցեղասպանութեան տարիներուն, գէթ մինչև Միացեալ Նահանգներու՝ Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմ յայտարարելը (1917), Հալէպը եղած է սուրիական անապատ և մերձակայ այլ վայրեր նպաստի փոխանցելու և բաշխելու գլխաւոր ու թերևս միակ կեդրոնը: Այդ աշխատանքին մէջ հիմնարար դեր խաղցած է Միացեալ Նահանգներու տեղւոյն հիւպատոս Ճեյմի Պ.

Արդէն Զօհրապին¹⁵ ու Վարդգէս¹⁶, Տաղաւարեանն¹⁷ ու իր հինգ ընկերները¹⁸ գնդակահար ինկած են ժանտարմաներու կողմանէ Ուրֆայի եւ Տիգրանակերտի

Ճաքսոնը (1871-1947): Միացեալ Նահանգներու պատերազմ յայտարարելէն և Ճաքսոնի Հալէպէն հեռանալէն ետք նպաստաբաշխ աշխատանքները շարունակած է գոիցցերիացի հալէպաբնակ բարեսէր վաճառական Էօժէն Զոլինկէրը:

¹⁵ Նկատի ունի գրող, հրապարակագիր, ազգային-քաղաքական գործիչ՝ Գրիգոր Զօհրապը: Ծնած է Կ. Պոլիս 1861-ին: Կրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ և վկայուած որպէս երկրաչափ ու իրաւաբան: 1883-էն զբաղած է իրաւաբանութեամբ: 1905-ին պետութիւնը արգիլած է զինք գործել որպէս իրաւաբան, որուն հետևանքով ան մեկնած է Ֆրանսա: Օսմանեան սահմանադրութեան հռչակումով 1908-ին, վերադարձած է Կ. Պոլիս և ընտրուած անդամ՝ Օսմանեան հորհրդարանի և Ազգային Քաղաքական Ժողովի, միաժամանակ դաստանդներով Օսմանեան Իրաւաբանական համալսարանէն ներս: Գրական ասպարէզ մտած է 1878-ին՝ աշխատակցելով *Մասիս*-ին ու *Հայրենիք*-ին, ուր տպագրած է վէպեր, նորավէպեր, ակնարկներ, պատմածքներ, բանաստեղծութիւններ և գրականագիտական յօդուածներ: Զօհրապ հայ գրականութեան պատմութեան մէջ ծանօթ է «Նորավէպի իշխան» անունով ու կը համարուի այս սեռի լուսագոյն ներկայացուցիչը: Հրատարակած գործերէն յիշենք՝ *Ասկերացած Սերունդ Մը* (Կ. Պոլիս, 1887), *Խղճմբարների Ձայներ* (Կ. Պոլիս, 1909), *Լուռ Ցաւեր* (Կ. Պոլիս, 1911), *Կեանքը Ինչպէս Որ է* (Կ. Պոլիս, 1911) և այլն: Ունի օսմաներէն և ֆրանսերէն լեզուներով գրուած իրաւաբանական գիրքեր, ինչպէս նաև ֆրանսերէն գրքոյկ մը՝ Հայկական հարցի մասին (Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական Բնութիւն*, Ա., Երևան, 1973, էջ 331-332, *Հայկական հարց* հանրագիտարան, էջ 131-132):

¹⁶ Բուն անունով՝ Յովհաննէս Մելնիկիւեան: Ծնած է Կարին 1871-ին: Աւարտած է ծննդավայրի Սանասարեան վարժարանը, ապա մտած է ուսուցչական ասպարէզ: Մասնակցած է Կարնոյ 1890-ի ցոյցին, որուն որպէս հետևանք շրջան մը բանտարկուած է, ապա անցած է Կ. Պոլիս, ուր 1892-ին մտած է Դաշնակցութեան շարքերը: Կրկին բանտարկուելէ ետք, որպէս կուսակցական գործիչ անցած է Վան, ուր 1903-ին դարձեալ ձերբակալուած է ու դատապարտուած մահուան, բայց կարելի եղած է մահապատիժը բեկանել ու վերածել ցկեանս բանտարկութեան: 1908-ի օսմանեան սահմանադրութեան հռչակումով ազատ արձակուած է և Կ. Պոլիս անցնելով՝ Կարնոյ կողմէ ընտրուած է անդամ Օսմանեան հորհրդարանի և Ազգային Քաղաքական Ժողովի (Սիմոն Վրացեան, *Յուշապարտմ Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950*, Բոստոն, 1950, էջ 397-400, Թժողիկ, *Յուշարձան Ապրիլ Տասնըմէկի*, Կ. Պոլիս, 1919, էջ 49):

¹⁷ Նկատի ունի բանասէր, հրապարակախօս, ազգային-մշակութային գործիչ, խմբագիր, մանրէաբան և բժիշկ Նազարէթ Տաղաւարեան-Չառորճեանը: Ծնած է Սեբաստիա 1862-ին: Ուսումը ստացած է Կ. Պոլիս, իսկ Փարիզի մէջ կատարելագործած է զայն՝ վկայուելով իբրև գիտատնտես: Շրջան մը վարած է ծննդավայրի ազգային վարժարաններու (1885-1886) և Կ. Պոլսոյ Արամեան վարժարանի տնօրէնութիւնը: 1887-ին մեկնած է Գահիրէ, ապա՝ Փարիզ և հետևած Սորպոնի համալսարանի բնագիտութեան և բժշկութեան դասընթացներուն: Վերադառնալով Կ. Պոլիս նշանակուած է Սր. Փրկիչ Ազգային հիւանդանոցի բժշկապետ: Համիտեան ռեժիմի օրերուն երկու անգամ ձերբակալուած է ու բանտարկուած (1896 և 1900): Գահիրէի մէջ մասնակցած է Հ.Բ.Ը.Մ.ի հիմնադրման նախապատրաստական աշխատանքներուն ու դարձած անոր առաջին Կեդրոնական Վարչութեան անդամներէն մէկը (1906): Օսմանեան Սահմանադրութենէն ետք Տաղաւարեան վերադարձած է Կ. Պոլիս և Սեբաստիոյ կողմէ ընտրուած է անդամ Օսմանեան Երեսփոխանական Ժողովին, միաժամանակ մաս կազմած է Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովին: Հիմաւ ու խմբագրած է հայերէն առաջին բնագիտական հանդէսը՝ *Գիտական Շարժում*-ը (Կ. Պոլիս, 1885-1887): Հրատարակած է պատմագիտական, բանասիրական և բժշկագիտական մօտ երկու տասնեակ հատորներ: Հայերէնի կողքին գրած է նաև թրքերէն և ֆրանսերէն լեզուներով:

¹⁸ Տաղաւարեանի հետ, «դատուելու» պատճառաբանութեամբ, դէպի Տիարպէքի իրենց ուղեւորութեան ընթացքին, 8 Յունիս 1915-ին Հալէպ հասած են Ռուբէն Զարդարեան, Է. Ակնունի, Գարեգին Խաժակ, Սարգիս Մինասեան և Յարութիւն Ճանկիւեան, իսկ Յունիս 12-ին՝ Զօհրապ և Վարդգէս:

մէջտեղ, Շէյթան տէրէսի¹⁹ կոչուած տեղը, ուր բիրաւոր հայերու դիակներ (անգլուխ) սարսափ կ'ազդեն ճամբորդներուն: Եփրատը բիրաւոր հայ եւ հայուհեաց դիակներով լեցուած է եւ լուսանկարուած երոպացոց շատերու կողմանէ: Տէր Զոր 15000 զէյթունցոց զաղթավայրն եղած է, դժոխային խոշտանգանաց մէջ²⁰: Հարիրաւոր մանկտիք գետեր ու դաշտերու մէջ նետուած են նոյնիսկ իրենց մարց կողմէ: Անմիջական պէտքը դրամն է, Ամերիկայի ազգայիններու փութով իմացուցէք, դրամ, դրամ:

1600 հայեր միմիայն Տիգրանակերտի բանտին մէջ խողխողուած են: Առաջնորդը²¹, յետ անդամալիալտման, բանտի բակին մէջ ալգոլով օծուած եւ այրուած է, նուագածութեամբ դիւային խրախճանութեանց²² իբր լրացուցիչ զոհաբերութիւն

¹⁹ Թրքերէն բառացիօրէն՝ Սատանայի ձոր: Կը գտնուի Տիարպէքիր նահանգի Տիարպէքիր գաւառին մէջ, Տիարպէքիր քաղաքին մօտակայքը (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Երևան, Դ. հատոր, 1998, էջ 102):

²⁰ 1915-ին թրքական իշխանութիւններուն կողմէ հայաթափուող առաջին աւանը եղած է Զէյթունը, որուն բնակչութեան մէկ մասը Մարտ 1915-ին նախ աքսորուած է Սուլթանիէ (Գոնիա), ապա՝ Էրէլլի եւ հուսկ՝ Տէր Զոր, իսկ մնացեալները զրկուած են ուղղակի սուրիական անապատ ու մեծ մասամբ՝ կոտորուած: Քաղաքին հայաթափումէն ետք, 13 Օգոստոս 1915-ին, թուրքեր այրած են զայն:

²¹ Նկատի ունի Տիարպէքիրի առաջնորդական տեղապահ Մկրտիչ Վրդ. Զլդատեանը: Աշխարհականի անունով՝ Յովնան: Ծնած է Դատուան (Բաղէշ) 1871-ին: Արմաշի Դպրեվանք մտած է Հոկտեմբեր 1890-ին եւ առանց կրօնատրական սքեմ ընդունելու հեռացած է անկէ: 24 Յուլիս 1898-ին Կ. Պոլսոյ մէջ Օրմանեան Պատրիարքէն ձեռնադրուած է քահանայ Տրապիզոնի Ղզանա գիւղին համար, ապա տեղափոխուած է Սելանիկ, ուր քարիտի բռնկումով կորսնցուցած է երիցուհին եւ դուստրը, ապա անցած է Եթովպիա, որմէ ետք՝ Կ. Պոլսոյ մէջ, Օրմանեան Պատրիարքէն ընդունած է վարդապետական աստիճանները: Քահանայագործած է Թօփ-Գափու, ապա դարձած է Պայագիտի առաջնորդական տեղապահ, Կարնոյ յարակից շրջաններու առաջնորդական փոխանորդ եւ հուսկ՝ առաջնորդ Տիարպէքիրի, ուր մնացած է մինչև իր նահատակութիւնը՝ 1915 (Թէոդիկ, *Գողգոթա Հայ Հոգևորականութեան եւ Իր Հօտին Աղէտայի 1915 Տարին*, խմբագրեց՝ Արայ Գալայճեան, Նիւ Եորք, 1985, էջ 260-261, Զաւէն Ա. քննյ. Արզումանեան, *Ազգապատում*, Դ. հատոր, Ա. գիրք, Նիւ Եորք, 1995, էջ 16):

²² Զլդատեան Վարդապետի նահատակութեան մասին այստեղ յիշուածները կրկնած են նաև այլ աղբիւրներ, որոնցմէ Թէոդիկն է ամէնէն մանրամասն նկարագրողը. «...դուրս կը հանեն զինք իր որջէն եւ շղթայատր կապիկի մը նման՝ նուագածութեամբ փողոցէ փողոց կը պտըտցնեն, ընդհանուրին թուրումուրին նշաւակ: ...որոնք կը շարունակեն նուագալսառն խեղկատակութեամբ խայտառակել այդ «վարիսթիան բուհանի»ն... անոր մօրութին թելերը ծիւ ծիւ կը փետէ... զմէկով մարմինը մորթագերծ կ'ընէ եւ շերտ շերտ կը յօշէ... կարգը կու գայ արինուլայ դիակին հետ զքօսնելու՝ հեղմամբ քարիտի: Լուցկի՝ մը... եւ ահա հայր սուրբը կ'ըսկսի բռնկիլ: Մծղնէ դէմքեր կը լուսատրուին երանաւէտ ակնարկներով, մինչ ճենճերման բոյրը սաստկօրէն կը ծաւալի գնդանին մէջ, որպէս հուսկ բուրվառում պատարագեալ մարտիրոսին»: Յաջորդ օր կ'իմացնեն ժողովուրդին թէ վարդապետը «բանտին շէնքը հրկիզել փորձած միջոցին՝ քարիտը վրան թափած ու բռնկած է» (Թէոդիկ, *Գողգոթա...*, էջ 260-261): Մօտատրապէս նոյն մանրամասնութիւնները տուած է նաև Ս. Ակունի, տե՛ս *Միլիոն Մը Հայերու Զարդի Պարմութիւնը*, Կ. Պոլիս, 1920, էջ 65-66):

չերքէզ ժանտարմաներու²³: Պեհեսնի²⁴, Ատրեամանի²⁵ եւ Սեվերեկի²⁶ կոտորածը սադայէլական ծրագրով կատարուած գրեթէ 13 տարեկանէն վեր արական սեռ չէ մնացած. կոյսեր անխնայ պղծուած եւ շատերը տեսանք Եփրատի հոսանքներէն քշուած զոմանս 4 եւ զոմանս 8-10 ընկերներով իրարու կապուած, անդամա[խա]տուած (շատերու ծննդական գործարանը կտրուած):

Ջերմապէս կը խնդրուի որ սոյն գրութիւնը իբրեւ վերջին ծայր գգուշութեամբ պաշտ. աղբիւրներէ եւ ականատեսներէ քաղուած մի տեղեկագիր, ամենայն գգուշութեամբ գաղտնի պահուի, առանց տարածայնելու, որպէսզի սոսկալի արդիւնքին վտանգները շատ պարզ են:

Ամերիկեան հիւպատոսարանն ալ կրնայ դիւրութիւններ ընծայել դրամի առաքման միջոցներուն: Ազգային եւ անհատական կոչուած եւ ստացուածքներ ծախելու միջոցներէ ալ զուրկ ենք, պետական արգելքի պատճառաւ, վանքեր, եկեղեցիներ, վարժարաններ իրենց բոլոր ունեցածներով կառավարութեան կողմանէ գրաւուած է: Սոսկալի անօթութիւն կ'տիրէ, այժմ հոս 15000 գաղթականներ կան մաս առ մաս

²³ Տիարպէքիի հայոց կոտորածի գլխաւոր պատասխանատու եւ քաղաքի նորանշանակ նահանգապետ բժ. Չերքէզ Ռէշիտ պէյ, 28 Մարտ 1915-ին քաղաք ժամանելուն իր հետ տարած է մեծաթիւ չերքէզներ՝ «ժանտարմա քոմանտանի» չերքէզ Ռուշտի Պէյը, թիկնապահ մը՝ Չերքէզ Շաքիր Պէյը եւ ժանտարմայի տարազ հագած 40-50 չերքէզ «չերքէ»ներ՝ հրոսակներ (Վահան Գալաֆեան, *Համայնօր Տեղեկագիր Տիգրանակերտի Վերջին Կոտորածներուն*, Նիւ-Եորք, 1919, էջ 8, Ակունի, *նշ. աշխ.*, էջ 62):

²⁴ Հայ եւ թուրք խառն բնակչութեամբ պատմական գիւղաքաղաք Արևմտեան Հայաստանի Խարբերդ նահանգի Մալաթիա գաւառի Պէհեսնի գաւառակի կեդրոնը, Մալաթիա քաղաքէն հարաւարևմուտք: 12-րդ դարուն շրջան մը մաս կազմած է Կիլիկիոյ հայկական թագաւորութեան: Տեղւոյն հայերը ունեցած են Սր. Փրկիչ իսկ հայ կաթողիկոսները՝ Աւետում Սր. Կուսի եկեղեցիները: Հայ աւետարանական համայնքը ևս ունեցած է իր եկեղեցին: Պէհեսնի ունեցած է նաև 270 աշակերտ հաշուող Ազգային Ներսէսեան վարժարանն ու հայ կաթողիկոսներու վարժարանը: 1914-ին քաղաքի 500 տուն հայութենէն 350-ը եղած են առաքելականներ, իսկ մնացեալները՝ կաթողիկոսներ ու աւետարանականներ (Թէոդիկ, *Գողգոթա...*, էջ 249): Ըստ այլ աղբիւրի ունեցած է 530 տուն՝ 3750 հայ բնակիչ (*Les Arméniens dans l'empire Ottoman a la veille du génocide*, Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, Փարիզ, 1992, էջ 391):

²⁵ Քաղաք Արևմտեան Հայաստանի Խարբերդ (Մամուրէթուլագիզ) նահանգի Մալաթիա գաւառի Ատիեման (Հուսնի Մանսուր) գաւառակի կեդրոնը: 1915-ին ունեցած է 15 հազար բնակիչ, որուն 6 հազարը հայեր էին (Ս. Մ. Ծոցիկեան, *Արևմտահայ Աշխարհ*, Նիւ Եորք, 1947, էջ 90), իսկ ըստ այլ աղբիւրի ան ունեցած է 600 հայ տուն (Թէոդիկ, *Գողգոթա...*, էջ 248): Քաղաքը ունեցած է նաև թուրք, յոյն եւ ասորի ազգաբնակչութիւն: Տեղւոյն հայ առաքելականները ունեցած են Սր. Աստուածածին եկեղեցին եւ Ռուբինեանց վարժարանը: Հայ կաթողիկոս եւ աւետարանական համայնքները ևս ունեցած են իրենց եկեղեցիներն ու դպրոցները:

²⁶ Կամ՝ Սևերակ: Քաղաք՝ Արևմտեան Հայաստանի Տիարպէքի նահանգի Սեվերէկ գաւառի կեդրոնը, Տիարպէքի եւ Ուրֆա քաղաքներուն միջև, առաջինէն հարաւարևելք, մօտ 80 քմ. հեռավորութեան վրայ: Քաղաքին մէջ պահպանուած են պատմական բերդի ւաւերակները: Տեղւոյն հայերը ունեցած են Սր. Թորոս եկեղեցին: Հայ աւետարանական համայնքը ևս ունեցած է իր եկեղեցին: Առաքելական հայերը ունեցած են 3 դպրոց, միասնաբար 250 աշակերտով: Հայ կաթողիկոս եւ աւետարանական համայնքները ևս ունեցած են իրենց դպրոցները 130 աշակերտով (Kévorkian-Paboudjian, *նշ. աշխ.*, էջ 400): 20-րդ դարասկզբին Սեվերէկը ունեցած է 15 հազար բնակիչ, որուն կէսէն աւելին հայեր, իսկ մնացեալները թուրքեր, քիւրտեր եւ ասորիներ էին (*Հայաստանի եւ Յարակից...*, Դ., էջ 582): Ըստ այլ աղբիւրի, ան ունեցած է 1855 հայ առաքելական ընտանիք՝ 9275 հոգի (Raymond H. Kévorkian, *նշ. աշխ.*, էջ 400):

կ'որոկուին Արաբիոյ զանազան վայրեր, ամբողջ Կիլիկիան եւ Կապադովկիան պարպուելու վրայ են: Ս. Կաթողիկոսն²⁷ ալ հոս կ'մնայ ճարահատ:

Իբրեւ ստորագրութիւն, նամակիս բովանդակութեան բոլոր պարբերութիւնները արիւնով կ'կնքեն:

ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ (1915 Թ.)

Միհրան Մինասեան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հրատարակութեան տրուած է 3/16 Օգոստոս 1915-ին Հալէպէն Գահիրէ յղուած գաղտնի տեղեկագիր մը որ կը խօսի Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ հայ ազգաբնակչութեան ոչնչացումին, աքսորի ճանապարհին որդեգրուած բռնութիւններուն, սուրիական անապատին մէջ տիրող իրավիճակին եւ մանաւանդ Հալէպ հասած հայ աքսորականներու մասին:

Հրատարակուող փաստաթուղթին կցուած են հակիրճ յառաջարան եւ ծանօթագրութիւններ:

Բանալի բառեր. Հայոց ցեղասպանութիւն, Հալէպ, հայ աքսորականներ, Արեւմտեան Հայաստան, Կիլիկիա, Սուրիական անապատ, մարդասիրական օժանդակութիւն:

²⁷ Նկատի ունի Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեանը: Ծնած է Խարբերդի Եղէգի գիւղը 1849-ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ: 1867-ին մտած է Երուսաղէմի Ժառանգատրաց վարժարանը: 1871-ին ուսուցիչ անուանուած է նոյն վարժարանին, իսկ 1874-ին ստանձնած է խմբագրութիւնը *Միօն* պաշտօնաթերթին: 1877-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: 1881-ին այցելած է Սբ. Էջմիածին, ապա յատուկ առաքելութեամբ անցած է Թիֆլիս և այլ հայաշատ կեդրոններ և ծառայած՝ հինգ տարի: 1885-ին Սբ. Էջմիածնի մէջ ձեռնադրուած է եպիսկոպոս: Վերադառնալով Երուսաղէմ 1887-ին ստանձնած է վանքի լուսարարապետի պաշտօնը, զոր վարած է մինչև 1902: Յաջորդ տարի ընտրուած է կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: 1915-ին ան պարտադրաբար լքած է Սոյո դարաւոր վանքը ու ապաստանած Հալէպ: Մինչև զինադադար ապրած է անդաստական կեանք՝ Հալէպի, Երուսաղէմի և Դամասկոսի մէջ, ապա վերադարձած է Միս: Կիլիկիոյ պարպումով կրկին լքած է Միսը ու անցած է Հալէպ և 1930-ին Աթոռը հաստատած է Անթիլիասի մէջ: Վախճանած է 9 Նոյեմբեր, 1939-ին:

Սահակ Կաթողիկոս հրատարակած է բանասիրական բազմաթիւ յօդուածներ, գիրքեր ու դասագիրքեր եւ կազմած է Երուսաղէմի ու Հալէպի հայերէն ձեռագիրներու զոյգ ցուցակները (Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս [Կիլէսէրեան], *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն Մինչև Մեր Օրերը)*, Անթիլիաս, 1939, էջ 773-1116, Վահէ Հայկ, *Խարբերդ Եւ Անոր Ոսկեղէն Դաշիրը. Յուշանամարեան Պարմական Մշակութային Եւ Ազգագրական, Նիւ-Եորք, 1957, էջ 1084-1086, Զաւէն Ա. Քինյ. Արգումանեան, նշ. աշխ., Դ. հատոր, Բ. գիրք, Նիւ Եորք, 1997, էջ 98-100):*

UNPUBLISHED REPORT ABOUT DEPORTED ARMENIANS IN ALEPPO (1915)

Mihran Minasian

SUMMARY

The article presents an original secret document, a report, sent from Aleppo to Cairo on August 3 (16), 1915. It contains information about destruction of the Armenian population deported from Western Armenia and Cilicia, violence against deported Armenians on the way, as well as situation of deported Armenians in Aleppo and adjacent Syrian deserts.

The document has a brief foreword and extended notes.

Keywords: Armenian Genocide, Aleppo, deported Armenians, Western Armenia, Cilicia, Syrian Desert, humanitarian aid.

НЕОПУБЛИКОВАННОЕ ДОНЕСЕНИЕ О ДЕПОРТИРОВАННЫХ АРМЯНАХ В
АЛЕППО (1915 Г.)

Мигран Минасян

РЕЗЮМЕ

Представлено секретное донесение отправленное 3 (16) августа 1915 г. из Алеппо в Каир, посвященное уничтожению депортированного из Западной Армении и Киликии армянского населения, насилию, которому подвергались депортированные армяне в дороге, а также положению депортированных армян в Алеппо и прилегающих к городу сирийских пустынях.

Документ предваряется кратким предисловием, а также содержит расширенные примечания.

Ключевые слова: геноцид армян, Алеппо, депортированные армяне, Западная Армения, Киликия, сирийская пустыня, гуманитарная помощь.